

ՈՂԿՈՅԶ

ԱՒԵՏԻՔ ԻՍՍԶԱԿԵԱՆԻ

Ագէպանը բա՛նը առեր,
Վարդի տակը կը փորէր.
Խեղճ բլբուլը վարդի սիրուն
Վիզը առաջն էր Դրեր:

Ես ծով երկնուց խառ հանքմ'էի,
Որ գեպին կուտ չուտէի.
Ա'խ, տես հիմի ուրքդ եմ ընկեր
Ծով սրտովս, նազանի.

Է՛յ, Դուն երկնի վառ-վառ արև,
Հէրիք կայնիս, ինձ էրես.
Հէրիք երթաս ամպի յետև,
Սիրտս շուքով սուգ էնես.

Դուն, ալ-խնձոր կանանչ թփով,
Ես քու թուփդ եմ, նուննուշս.
Դուն, կարմիր վարդ զառ տերևով,
Ես տերեւդ եմ, աննուշս:

Ա'խ, վախնամ թէ աշունը գայ,
Քեզի քաշեն, հողի ջան.
Ես թուփ, տերև մնամ—չորնամ,
Ա'խ, Դուն հոգուս հողի ջան:

Ախր քեզնէն խռովեր եմ,
 Ուրիշ երամ եմ մտեր
 Ոսկէ վանդակ էլ որ շինես,
 Ել չես կրնար ինձ պահեր:

Քու կարօտը շատ կը քաշեմ,
 Քովս չես գայ, էջ, նազընու.
 Հէջ չէ տեղի վարդեր շրկէ,
 Պագեմ, շնեմ աչերուն:

Ախ, մարալը աղբուրի մէջ
 Եղնիկի մ' շուքն է տեսեմ.
 Ու ման կուգայ էն եղնիկին
 Մուրիկ-մուրիկ զօր-զիշեր...